

# ԲԱԶՄԱՇԵՐՏ ԿԱՐՈՏ

*Posted on July 10, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



### **Սիլվա Իսկիկեան Մահրեճեան, Լոս Անճելըս, 26 Յունիս 2022**

28 Սեպտեմբեր 2021-ին, աշնանային ամպոտ օր մը, հրաժեշտ տուի իմ սիրելի ծննդավայրիս՝ Պէյրուքին, ինձի հետ վերցնելով երկու ճամբորդական պայուսակ եւ երկուքի կիսուած սիրտ մը: Թէ պայուսակներս ի՞նչ կրնային պարունակել, դիւրին է կռահելը, իսկ կիսուած սիրտիս ցաւը՝ դժուար ...:

Կեանքս, որ յագեցած էր Միջերկրականի ջուրերով, համեմուած անոր աղով ու թրծուած իր տաք աւազով, բերի մկրտելու խաղաղականի ջուրերով, որ իսկութեան մէջ անխաղաղ է ու սառն: Իմացայ, որ գոյատեւելու համար հարկաւոր է նոր ինքնութիւն եւ նոր չափանիշներու որդեգրում:

Պայման է, որ նոր երկնակամարին օդը շրջի թռքերուս մէջ, նոր որակի արիւն հասնի սիրտիս, որպէսզի կարենամ հաշտ ապրիլ հոգիիս մէջ ծաւալող կարօտին հետ:



Ամենօրեայ դրութեամբ ժամ մը կը քալեմ, ընկերակից ունենալով նախասիրած երգացանկս, որ մերթ զուարթացնող է ու մերթ յուզող: Միեւնոյն ատեն այնքա՛ն հնչել ու

ագրու է, որուն խագերուն մէջ կը խլանայ հոգիիս աղմուկը...: Սա այն պահն է, երբ  
ներաշխարհիս հետ կը նոյնանամ ամենայն անկեղծութեամբ...: Շուրջս տարածուող  
բնութիւնը հրաշալիօրէն գեղեցիկ է, բայց զարմանալիօրէն օտար: Ամէն բան իր  
կատարելութեան մէջ անկատար կը թուի...: Խորթ անդորր մը կը տիրէ, որուն մէջ կը  
փորձեմ լսել աղմուկը՝ երբեմնի կեանքով լեցուն թաղերուն, ուր աջ ու ձախ բարեւները  
ժպիտներով յագեցած էին:

Քայլերս կ'երթան հեռուն՝ յուշերուս ուղիներով եւ սրընթաց կայծակի արագութեամբ կը  
հասնիմ ծննդավայրս, ուր կարօտս դեմքեր կ'առնէ՝ յստակ, բարի ու հարազատ: Ահա կը  
տեսնեմ տանս ճաշասեղանին նստած երիտասարդը՝ կենսուրախ, սրամիտ ու  
կատակասեր: Առջինեկս է՝ իսկական Սեւակ, սեփ սեւ փայլուն աչքերով, որուն հետ  
քառասուն տարուան քաղցրը ու դառնը կը կիսեմ...:



Վրայ կը հասնի

դուստրս՝ Դալարը, յստակօրէն կը նկարագրէ լիբանանցիին դիմագրաւած  
մարտահրաւերներն ու ցաւերը: Սիրտս կը հալի... , բայց բոլորին նման ես ալ պայքարի  
գրահը կը հագուիմ, ձեռքիս մէջ ունենալով սոսկ աղօթք մը, իբրեւ անխորտակելի  
վահան...: Քայլերս տանս սենեակները կը շրջին, որոնք մատնահետքերս ու  
տարիներուս դրոշմը կը կրեն: Տանս պատերուն ամրացուած գեղանկարները՝ ապրուած  
կեանքի մը պատմիչներն են: Ամէն մէկ շրջանակ դէպք մը կը պատմէ, ժամանակ մը կը  
յուշէ եւ վայր մը կը գծէ: Ամէնուր մասնիկ մը ձգած եմ իմ եութենես...: Հոս Դամասկոսի

Ներքին թաղերն են, ուրկէ կը բուրբ բաղնիքներէն ճարճատող փայտին հոտը, իսկ  
աւազաններով բակերը՝ տօնական տրամադրութիւն կը ցայտեն: Այստեղ Հայաստանն է՝  
բերած եմ Սարեանի պարտեզէն, արուեստի վրձինով հիւսուած՝ ազգագրական  
տարազներով կանայք: Իսկ սա՛ Արարատը, թէեւ աւելի գեղեցիկ ու գունազեղ է, քան  
գրաւեալ կողմը, բայց միտքիս մէջ տպուած է այն, որուն կատարները լերկ որբուկներու  
նման նստած են օտարին «տան» մէջ: Ահա սա՛ կտաւեայ պաստառը, արուեստագետ  
Մկրտիչ Ասլանեան Ծիրացիի գործն է, ուր Մխիթար Հեռացիին առաքելութեան ու  
կերպարին հետ, համադրած է բժիշկ ամուսինիս դէմքը, որուն անժամանակ հեռանալը  
անմխիթար տրտմութիւն պատճառեց սրտիս: Այս գոյգ ձիերուն իւղանկարը շալկած կը  
քալեմ Հռոմի լայն պողոտաներով, հմայքով կը դիտեմ հսկայ պատմական կառոյցները  
եւ Դրեւի ցայտադրւելիս մէջ քանի մը մանրադրամներ կը նետեմ ու պաղատագին  
բացարձակ առողջութիւն կը խնդրեմ...: Սա շրջանակին մէջ կը պատկերովի Եգիպտոսի  
հզօր ու անսասան բուրքերը, կողքը հերոզիֆի տառերով արձանագրուած՝ Կարօ ու  
Սիլվա անունները: Ո՞ր մէկ պաստառը պակաս կը յուզէ՞ Փարիզեան Նոթր Տամն ու  
Էյֆէ՞լը, Սիտնիի տեսարժան վայրե՞րը, Փրակայի Չարլզ կամու՞րջը...:

Երկա՛ր «պտոյտես» յոգնած կը նստիմ, աչքերս յառած գրադարանին մէջ տեղադրուած  
բազմաթիւ գիրքերուն, որոնց տերը ամբողջ կեանքին ընթացքին գուրգուրանքով  
հաւաքած է, բայց ակամայ լքած ու հեռացած է: Իրեր այլազան՝ երաժշտական  
գործիքներ, երգարաններ, տեսերիզներ, գնահատական յուշատախտակներ..., ամէն  
մէկը՝ ճշացող ցաւ, ճակատագրի ափսոսանք ու անհուն կարօտ:

Ահա ականջիս երգ մը կը հնչէ՝ Էլվիս Բրիսթլիէն, որ կ'ըսէ. «Մինակ ե՞ս այսօր, կը  
կարօտնա՞ս զիս այսօր...» ու անդիմակ հոգի մը ձեռքես բռնած, կը տանի զիս հոն, ուր  
առաջին սերս կը տեսնեմ: Կը պարենք գրկախառն՝ մեղեդի մը, որուն աւարտը մինչեւ  
օրս չեմ լսեր...:

Պատշգամէն ներս փչող կապոյտ ծովու քամին դէմքս կը շոյէ, կը շոգիացնէ այտերես  
վար սահող արցունքի տաք կաթիլները ու ակամայ կը սթափիմ...: \_

**There are no comments yet.**